



Շիրվանցադէ

ՀԻՐՎԱՆԶՈԴԻ

# ԱԻԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱՅ

Դրամա 4 արար. եւ 5 սկառկ.

# ԱՐԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱՅ

Դրամա չորս արարուածով և հինգ պատկերով

Հեղ. ՇԻՐՎԱՆՋԱՂԻՆ.

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱԹԱՆԷՍ ՖՈՒՆ ԳՈՒԼԵՑԱՆ յայտնի վաճառական—60 տարեկան:  
ՆԱՐԳԻՉ, նրա ամուսինը—50 տարեկան:  
ԼԵՒՈՆ. նրանց մեծ որդին—27 տարեկան:  
ՍԱՄՈՒԵԼ, նրանց երկրորդ որդին—22 տարեկան:  
ՈՎՍՈՒՆՆԱ, նրանց աղջիկը—23 տարեկան:  
ԱՐԱՄՈԶԴԻ. ԱՂԱԻԼԵՑԱՆ, Աթանէսի նախկին գործակատարը—  
այժմ խոշոր ձեռնարկող—33 տարեկան:  
ՆՈՅԻՄՉԱՐ, Արամազդի քոյրը, անզաւակ այրի—32 տարեկան:  
ԼԵՅԼԻ, Արամազդի երկրորդ քոյրը, օրինորդ—21 տարեկան:  
ԳԵՈՐԳԻ. ԱԴԻԼԲԵԿԵՑԱՆ, որին հասարակօրէն կոչում են Ժօրժ,  
Լոսինի գիմնազիական ընկերը և Ովսաննայի նշանածը—28 տա-  
րեկան.  
ՇԱՄԻԼ-ԲԵԿԻ ՄԵԼԻՔ-ԱՂԱԶԱՆԵՑԱՆ, Արամազդի գործընկերը—38  
տարեկան:  
ՆՈՒՆՈՒՖԱՐ, Ֆռանգուլեանների աղախինը:  
ԶԱԻՍԻ, նախ Ֆռանգուլեանների, յետոյ Արամազդի ծառան—37  
տարեկան:  
Թութակ, թռչուն վանդակի մէջ Աղաւէլեանների տանը:

Գործողութիւնը կատարւում է 189... թուականներին: I և  
III արարուածները ու IV արարուածի երկրորդ պատկերը կա-  
տարւում են ֆռանգուլեանների տանը, II արարուածը և IV-դի  
առաջին պատկերը Աղաւէլեանների տանը:

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Տեսարանը ներկայացնում է Թռանգուլեանների բնակարանը: Մեծ սենեակ, կահաւորուած հարուստ, բայց հնաձև կահ. կարասիով:

Աջ \*, պատի մէջ երկու դռներ, որոնցից առաջինը \* տանում են Աթանասի սենեակը, երկրորդը, որ գրեթէ անկիւնումն են է դռնուում, դէպի նախասենեակ, Խորքի պատի մէջ դռներ, որ տանում են սեղանատուն և այնտեղից բնակարանի խորքը, Զախ պատը ներկայացնում է երկու հնաձև լուսամուտներ, մէջտեղ ապակեայ դռներ, դէպի պատշգամբ՝ փողոցի վրայ:

Բեմի մէջտեղում հին ձեւի թանգագին դրուագեալ (incrusted, բրէզով) սեղան, առանց ծածկոցի, վրէն մի մեծ, սեացած արծաթեայ ափսէ, մէջն այցեատումներ: Սեղանի քով ընկուզենեայ ծանր աթոռներ: Աջ պատի առջև, երկու դռների միջև գահաւարակ, առջև փոքրիկ սեղան սփոռոցով ծածկուած, քովը երկու բազկաթոռ: Խորքի պատի առջև, դռների ձախ կողմում վառարան, վրէն հնաձև ժամացոյց, աջ կողմում թախտ, ծածկուած Խորասանի թանգագին գորգերով, որի մի ծայրը յատակն է ծածկում, միւսը— պատը մինչև առաստաղ: Թախտի վրայ ոսկեթել հիւսուածքով ծածկուած բարձեր: Ամենուրեք թանգաղին և զանազան երկրների գորգեր, որոնք սենեակի գլխաւոր զարդն են կազմում: Պատերի վրայ վերջին կաթողիկոսների պատկերներն ու կոնդակները:

Դաշնամուրը դրած է ձախ պատի առջև, դէպի աւանսէն: Դրսում, պատշգամբի վրայ ծաղկամաններ և բոյսեր, որոնք, բաւական խտատերև լինելով, կանաչեղէնի մի թուփ են կազմում:

\* Աջ ու ձախ, ինչպէս և «Առաջին-երկրորդ» միշտ պիտի ընդունել հասարակութեան կողմից: Ծ. Հ.

## ՏԵՍԻԼ 1.

**ԶԱՀԱՐ և ՆՈՒՆՈՒՅԱՐ.**

Վաղ գարուն է, առաւօտ։ Լուսամուտները բաց են, վարագոյրները յետ քաշուած։ Արեգակի հարուատ ծառազայթները տարածուել են ներս եւ, հետզհետէ առաջ գալով, հասնուած են մինչեւ բեմի կէսը եւ ապա, տեսարանի ընթացքուած կրծատուելով, կամաց կամաց չքանուած են։

Բեմի ետեւից լաւումէ ջութակի մեղմիկ եւ դանդաղ ձայնը։ Սամուէլն է իր սենեակում նուագուած։

**ԶԱԻ.** (Վարագոյրը բարձրանալիս պատշգամթի վրայ ցնցուղով ջրում է ծաղիկներն ու բոյները)։

ՆՈՒՆ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներից մի մեծ սպիտակ լաթ ծնոքին եւ սկսուած է արագ արագ սրբել կահ-կարասին։ Նիհար, թուկս-թուկս կին է ժամանակից առաջ թառամած։ Հազած է մաքուր շրջազգեստ օրուայ տոնի առիթով, կրծքին կապած է սպիտակ գոզնոց)։

Մի քանի վայրկեան լուռ գործողովթիմ։

**ԶԱԻ.** (Ցանկարծ ներս է ցատկուած պատշգամթից կօմիքական թոհիչքով, ջրի ցնցուղը ծնոքին։ Ժպտոն, անհոգ դէմքով, վարփուն աշքերով տղամարդ է, երեսը սափրած, գեղեցիկ ունքերով եւ սեւ, հաստիկ թեղերով։ Հազած է կապտագոյն արխալուդ, վրէն կինամոնագոյն պիջակ, մէջքին արծաթեայ գօտի։ Վզով զցած է ժամացոյցի մի երկայն արծաթեայ շղթայ։ Խօսելիս ծեռներով, գլխով եւ մանաւանդ ուսերով համապատասխան շարժուաներ է անուած։ Դիմախաղը վերին աստիճանի հարուատ է)։ Վայ բաջի, տունս քանդուեց։

ՆՈՒՆ. (Միհանզամայն անվըրդով, առանց գործն ընդհատելու)։ Հըմ, էլի ի՞նչ օձ կծեց։

**ԶԱԻ.** Թուրքի գլխին ջուր թափեցի։

ՆՈՒՆ. (Ծիծաղուած է)։ Այ անշնորք։

**ԶԱԻ.** Եավաշ տեսնեմ, ի՞նչ է անուած։ (Գլուխը դուքս է քերուած պատշգամթի դռներից, չը համարձակուելով ամ-

բողջ մարմնով դուքս գալ): ԳԵՂ, գԵՂ: (Բողունցք է ցոյց տալիս)։

ՆՈՒՆ. Ուշտանց է տալիս։

ԶԱՀ. Շատ թունդ. ԳԵՂ: Շիշ փափաղը թրջուել է։ Արախչինը բաց է արել, կանդազն երևում է։ ԳԵՂ: Ըհը, հեռանում է, գնաց։ Լաւ պրծանք։ Ախար, ով է տեսել, որ ծառերը բերեն, հաւաքեն տանը։ Դա էլ ոռւսից սովորեցինք։ (Ծորից ուզում է պատշգամք դուքս գալ, բայց յանկարծ, եղանակով յափշտակուած, կանգ է առնում եւ հիացմամբ նայում է դէպի պատշգամք։ Կարծ լուսվիլն)։

ՆՈՒՆ. Ասա՞:

ԶԱՀ. Ախըր, մի տես է։

ՆՈՒՆ. Էլի գժութիւնդ բռնեց։

ԶԱՀ. Գարունն եկաւ նախշուն թերով

Աղբաթս խառնեց պէս պէս ձներով։

Մին մտիկ արա է, այս պայծառ արկին, կապոյտ երկնքին։ Հրէն է, նաւը թերը բաց արած լողում է կանանչ ծովի վրայ նորահարսի պէս։ Ախ, այդ Սամուէլ ողան էլ որ ջութակ չի ածում, սիրտս մըղկըտ-մըղկըտ է անում։ Բայց ինչ էլ որ լինի, մեր գարունքի տեղը չի բռնիլ։

ՆՈՒՆ. Հըը, էլի սկսեց իւր Շամախին գովել։

ԶԱՀ. (Ցնցուղը ղնեյով յատակի վրայ)։ Տես, նունուֆար, աշխարհում տեղ չի մնացել ոտքիս տակովն արած չը լինիմ։ Ծովի այս կողմից չեմ խօսում, աա այն կողմից։ Տես, դա կրասնօսկիյ, դա Զարջիւ, դա Խիւա։ Էմիրը չէք, էմիրի չալման եմ տեսել, մինչև Սամարղանդ հասել եմ, Շամախիի պէս քաղաք... աստաֆուռուլլա։ (Ցնցուղը ծուլօրէն վերցնուալ է)։ Ծրէկ էլի մին մուխամմազ գրեցի։ Քնար հայկական կարդացել ես։

ՆՈՒՆ. Չէ։

ԶԱՀ. Սայեադ-Նօվան։

ՆՈՒՆ. Չէ։

ԶԱՀ. Զարգեամբն ինչպէս։

ՆՈՒՆ. Նրան էլ չեմ կարդացել:  
ԶԱԻ. Է՞հ, դէ դա է պատճառը, որ պատիւ չես ա-  
նում ինձ էլի:

ՆՈՒՆ. Ինչու, դու մվ ես որ...

ԶԱԻ. Ե՞ս, հըը, ես շահիր—Զաւաղն եմ: Այ, այս  
մեծութեամբ դաւթարներ ունիմ շարադրած: Դէս մտիկ  
արա, Շամախին մինչև օրս երկու մարդ է տուել, մինը  
Զարգեարն է, մինն էլ ես, ուրիշը չը կայ, լաւ իմացիր:  
(Ուզումէ զնալ պատշզամբ, բայց, լսելով Նարգիզի ծայնը,  
նորից կանգ է պոնում):

## ՏԵՍԻԼ Ա.

ՆՈՅՆՔ և ՆԱՐԳԻԶ, յետոյ ՈՎՍԱՆՆԱ:

ՆԱՐԳԻԶ. ((Բեմի ետեղից) Զաւաղ, Զաւաղ:

ԶԱԻ. Այսուեղ եմ, խանում: (Տեղից չի շարժում):

ՆԱՐԳԻ. (Ծրեւսաւ է խորքի դռների մէջ: Հիք-լիք, քայց  
լեղնած թշերով կին է, հպարտ քայլուածքով եւ հրամայո-  
ղական, գոռոզ ծնւերով: Հազ սծ է տօնային շրջազգեստ,  
ուանդին զցած է Քիրմանի շատ ընտիր շալ: Ալեհառը մա-  
զերը սանրած են հարթ): Շուտ արա, բազար գնա, աղադ  
դոների մօտ քեզ է սպասում:

ԶԱԻ. Ծիծեռնակի պէս թռայ. (Դանդաղօրէն քայլերն  
ուղղուած է դէպի նըկորորդ դռները):

ՆԱՐԳԻ. Եթէ թազա ձուկ բերել են, թող մի հատ  
առնի:

ԶԱԻ. Լաւ: (Գնում է աջ կողմի երկրորդ դռներով,  
ցնցուղը տանելով):

ՆԱՐԳԻ. (Նունուֆարին): Դու էլ գնա, սամավարը հա-  
ւաքիր:

ՆՈՒՆ. Այս ըոպէիս: (Գնում է խորքի դռներով, ծա-  
նապարհին պատահում է Ովսաննային):

ՈՎՍ. Նունուֆար, այս նամակը գցիր փոստարկդ.  
(Գալիս է խորքի դռներով ծեռին մի փոքրիկ ծրար, նույր

կազմուածքով, բասական սիրուն, բայց շատ նիհար օրիորդ է։ Ձեւերը կիրթ են եւ նուրբ։ Հազար է նոյնպէս տօնային ուրախ հազարա։ Բացի մի խոշոր աղամանդեայ քորոցից ոչնչ ակներէն կամ ուսկելէն չը կայ վրէն։ Հանդարտ մօտենուա է դաշնամուրին եւ, ոտքի վրայ կանգնած, սկսուա է անփոյթ ինչ-որ ուրախ եղանակի ակօրդներ տալ։

ՆՈՒՆ. (Նամակն առնելով, զնում է աջ կողմի երկրորդ դրույթը)։

ԲԵՄԻ ԵՏԵՒՈՒՄ։ Սամուէլը դադարում է ջուլթակ նուագել, Մի քանի զոպէ անցած նորից նուագում է մի ովիշ եղանակ եւ յետոյ թոլորովին ընդհատում։

### ՏԵՄԻԼ III.

#### ՆԱՐԳԻԶ և ՈՎՍԱՆՆԱ.

ՆԱՐԳԻ. (Թախտի քարձերն ուղղում է եւ զալիս նստուա է հանդարտ գահաւորակի վրայ)։ Քսան ու երեք ասարիդ էլ լրացաւ, տեսնենք այժմ ինչ ես մտածում։

ՈՎՍ. (Անփոյթ) Ինչի՞ մասին, մայրիկ։

ՆԱՐԳԻ. Դու գիտես ինչի մասին եմ ասում։ Եթէ պսակուելու էք, ասացէք, որ պատրաստութիւն տեսնենք, թէ չէ...

ՈՎՍ. (Երեսը դարձնելով դէպի նարգիզը, նոյն անփուլութեամբ)։ Թէ չէ, ի՞նչ, մայրիկ...

ՆԱՐԳԻ. Ովսաննա, մեր քաղաքում շատ քիչ բան է հարկաւոր մի աղջկայ բամբասելու համար։

ՈՎՍ. Ցետոյ։

ՆԱՐԳԻ. Ցետոյ այն է, որ դու այսօր պէտք է նրանից մի հաստատ խօսք վերցնես։

ՈՎՍ. Լաւ, բաւական է, մայրիկ, այսօր իմ ծննդեան օրն է, հիւրեր պիտի գան, չը վիճենք։ (Մօտենում է լուսամուտներից մէկին եւ նայում է դէպի դուրս)։

ՆԱՐԳԻ. (Խորին յանդիմանովնեամբ)։ Ովսաննա, մայրական համբերութիւնն էլ չափ ու սահման աւնի։

**ՈՎՍ.** (Գրգոռութլով): Ի՞նչ ես կամենում, մայրիկ, Բնչւ  
ես խօմ չեմ կարող նրան ստիպել ինձ հետ ամուսնա-  
նալու:

**ՆԱՐԴ.** Ստիպել... Ո՞վ է այդ ասում: Թեղ համար  
նշանածներ են պտկաս մեր քաղաքում: Ես միայն ուզում  
եմ, որ դու մեր տան պատիւը պահպանես, ուրիշ ոչինչ:  
Գալիս է—գնում, ոչ հարսնացու ես, ոչ ազատ: Ես այդ  
չեմ կարող թոյլ տալ այսուհետեւ: Ես ինքս կը խօսեմ նրա  
հետ: (Վեր է կենում):

**ՈՎՍ.** (Դրական եւ խիստ): Դու այդ չես անիլ:

**ՆԱՐԴ.** (Նոյնական դրական): Կանեմ և հէնց այսօր:

**ՈՎՍ.** Մայրիկ, տեսնում ես այս լուսամուտը:

**ՆԱՐԴ.** Ի՞նչ ես ուզում ասել:

**ՈՎՍ.** Նա բաւական բարձր է փողոցից: Եթէ դու  
ժօրժին մի խօսք, մի բառ կասես կամ որ և է ակնարկ  
կանես իմ մասին, այն ժամանակ... մեղքը քեզ վրայ...:

**ՆԱՐԴ.** (Ազդուած) Գժեր էք դուք, կապելու գժեր,  
ամեն բան կարելի է ձեղանից սպասել: (Քայլերն ուղղում  
է դէպի խորքի դռները, բայց, զանգակի ծայն լսելով, կանգ  
է առնում):

Նախասենեակում զանծակի ծայն:

**ՆԱՐԴ.** (Վերադառնալով քեմի կենտրոնը): Տես ով է:

**ՈՎՍ.** (Մօտենուած է աջ կողմի երկրորդ դռներին, բաց  
է անում, նայում է դէպի նախասենեակ եւ՝ յետ է զալիս):

**Արամազդի** քոյրերն են: Գալիս են ինձ շնորհաւորելու:

**ՆԱՐԴ.** (Արհամարհանքով): Օհ, կարօտել էի նրանց,  
որ, լոյսը նոր բացուած, վազում են գլխիս:

## ՏԵՍԻԼ IV.

**ՆՈՅՆԻ, ՆՈՅԻՄԶԱՐ և ԼԵՑԼԻ.**

**ՆՈՅԵՄ.** (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներից: Կարմիր  
պյտերով, առողջ կին է անտաշ ծեւերով: Հազած է եւրոպա-  
կան շրջազգեստ, իսկ զլովիր կրում է վրաց թասակրաւ):

Բարով ձեզ: (Սեպհական արժանաւորութեան գիտակցութեամբ ծեռ է տալիս Նարգիզին եւ Ովսաննային): Շնորհաւոր ձնունդդ, բաղդաւոր լինիք:

**Լէթլի.** (Կայտառ, գեղեցկադէմ, ամօթխած, համեստ ձեւրով օրիորդ է: Հազնուած է լիովին եւրոպական տարագով շատ համեստ, բայց ոչ-անճաշակ: Աչքի են ընկնուա հարուատ գանգուտ մազերը պարզ գլխարկի տակից: Հրու հետեւում է բրոջը եւ խոնարհ բարեւում):

**ՈՎՍ.** (Ընդունում է հիգերին սիրալիք, բայց հալարտ: Լէյլի հետ համբուրտուա է): Շնորհակալ եմ: Շատ ուրախ եմ ձեր գալուն: (Հյափրուա է գահաւրակի կողմ):

**ՆԱՐԴ.** (Հիւրերին ընդունել է զիսի թեթեւ շարժումով, ոչմքին մի հեգնական ժակիտ): Ներեցէք, եթէ պատրաստ չենք: Մենք ուշ ենք զարթնում:

**ՆՈՅԻՄ.** Դէ պարտք համարեցինք ամենքից առաջ գալ: (Դուքս է բներուամ սեւ, մետաքսեայ պելըրինի տակից մի տուփ քաղցրաւենիք եւ դնում է աննկատելի անկինի կլորիկ սեղանի վրայ):

**ՆԱՐԴ.** Կարող էք նստել: (Ինքը չի նստուա): Ձեր եղ. բայրն ինչու է մեր մօտից դուրս գալիս:

**ՆՈՅԻՄ.** Ձը գիտեմ: (Նստուա է բազկաթոռի վրայ, ծեռները յենում հովանոցի կոթին):

**ՈՎՍ.** Միթէ Արամազդը թողնում է ծառայութիւնը հայրէկի մօտ: Ես այդ չգիտէի: Օրիորդ Լէյլի, նստեցէք, այստեղ, մօտս: (Նստուա է եւ սկսում է Լէյլի հետ խօսել առանձին):

**ՆԱՐԴ.** Երեի, հարստացել է: Ժամանակները փոխւել են, հիմայ գործակատարները շատ շուտ են հարստանում:

**ՆՈՅԻՄ.** Երանի թէ այդպէս լինէր:

**ՆԱՐԴ.** Ի հարկէ, ով չի ուզում, միայն թէ ազնիւ ճանապարհով հարստանան: Մենք քանի՞ քանի գործակատարներ ենք ունեցել, որոնք այսօր օրինաւոր վաճառա-

կաններ են. Տրեխներով գալիս են մեզ մօտ, կօշիկներով գնում:

ՆՈՅԻՄ. Իմ եղբայրն իսկի տրեխներ չի հագել: ՆԱՐԴ. Ես օրինակի համար եմ ասում... Նա էլ գիւղականի տղայ է, չէ... Դէ ամենքին մարդ դարձնողը մենք ենք էլի...

ՈՎՍ. (Յանդիմանական եղանակով): Մայբիկ, մարդիկ մարդ են դառնում իրանց խելքով և ոչ մեղնով:

ՆԱՐԴ. Ի՞նչ կը կամենաք պատրաստել տամ, սմբռճ, թէ շօկոլադ:

ՆՈՅԻՄ. (Արժանապատուվծեամբ): Ոչ մէկը, շնորհակալ ենք...

ՆԱՐԴ. Երկի, քաղցած չէք: Դէ, ի հարկէ, լոյսը նոր է բացուել: Մեզ մօտ հիւր գալիս են տասներկու ժամից սկսած:

ՆՈՅԻՄ. (Արդէն վիրատրուած): Դէ մենք չը գիտենք գիւղականի աղջկերք ենք:

ՆԱՐԴ. Մեր ժամանակում էլ ազնուականութիւն ֆամաց: Այնքան սրա ու նրա հետ նստեցինք, վերկացանք, որ կարգ ու կանոն մոռացանք: (Նստում է եւ սուր հայեացքով նայում Լէյլիին: Մեկուսի): Ի՞նչ առողջ է անիծւածը...

ԼԷՅԼԻ: Այո, օրիորդ, կարդում եմ, ինչ-որ ձեռքս է ընկնում:

ՈՎՍ. Միայն հայերէն, թէ ոռւսերէն էլ:

ԼԷՅԼԻ. Ռուսերէն մի քիչ դժուարութեամբ եմ հականում:

ՈՎՍ. Փոյթ չէ, շուտով կը սովորէք: Եկէք շուտ շուտ ինձ մօտ, ես ձեզ շատ հետաքրքրական գրքեր կը տամ:

ՆՈՅԻՄ. Շնորհակալ ենք:

ՆԱՐԴ. (Շարունակ նայել է Լէյլիին): Ովսաննա, նայում եմ այդ աղջկան... (Լէյլիին): Անունդ մոռացել եմ:

ԼԷՅԼԻ. (Շփոթուելով) Լէյլի:

**ՆԱՐԴ.** Նայում եմ Լայլիին և մտածում եմ ինչ լաւ կը գար քո հագուստը նրա վրայ (Դառնոալ է նոյիմզարին) Զորս-հինգ հագուստ ունի աղջիկս, բոլորն էլ համարեա նոր, չի հագնում, մօդայից դուրս են եկել:

**ՆՈՅԻՄ.** Տուէք ձեր աղախնին:

**ՆԱՐԴ.** Ափսոսում եմ: Հըը, Ովսանա, ինչ կասես, բախշենք Լայլիին:

**ՆՈՅԻՄ:** (Կատաղութեան նշաններ է անում մէկուսի):

**ՈՎԾ.** (Մօր փոխարէն ամաշել է): Մայրիկ, դրա ժամանակը չէ, (Աշխատում է Լէյլիին զքաղեցնել):

**ՆՈՅԻՄ.** (Այլ ես չը կարողանալով իրան զսպել) Իմ քոյը ձեր աղջկանից համ հասակով բարձր է համ էլնրա պէս լղար չէ...: (Մէկուսի) Կերար...

**ԼԷՅԼԻ.** (Քրոջ փոխարէն ամաշել է, շփոթուել, նայում է նրան յանդիմանութեամբ):

**ՆԱՐԴ.** (Սասարիկ խայթուել է): Հա, ի հարկէ, անտաշ է...

**ՆՈՅԻՄ.** (Վեր է կենում) Լէյլի, ժամանակ է գնալու, (Նարգիզին): Մնաք բարով:

**ՈՎԾ.** (Վեր կենալով) Ինչնու էք շտապում:

**ՆՈՅԻՄ.** (Կծուած) Շատ որ նստենք, շիլ կը նայենք: Լէյլի, ես գնացի:

**ՈՎԾ.** Ճաշին խնդրեմ շնորհ բերէք:

**ՆԱՐԴ.** (Թագուն նշան է անում Ովսաննային, որ չը հրաւիրէ):

**ՆՈՅԻՄ.** Շնորհակալ ենք... Զենք կարող: Լէյլի, ես գնացի: (Գնում է աջ կողմի երկրորդ դռներից):

**ԼԷՅԼԻ.** Մնաք բարով (Շփոթուած ամօթխած զլուխ է տալիս Նարգիզին, իսկ Ովսաննայի ծեռը սեղմում է):

**ՈՎԾ.** Ցըտեսութիւն, Լէյլի: Ես ճաշին ձեզ անպատճառ կը սպասեմ:

**ԼԷՅԼԻ.** (Ամելի շփոթուած) Ոչ, ոչ, չը սպասէք: Ցը տեսութիւն: (Գնում է նոյիմզարի ետեփց):

**ՈՎՍ.** (Սիրալիք ուղեկցում է Լէյլին մինչեւ զոները):  
**ՆԱՐԴ.** (Նկատել է քաղցրաւենիքի տուփը, վերցնում  
է, նայում եւ էլի արհամարհանքով տեղը զնում): Դէս  
նայիր, կանֆէկտ էլ են բերել...

### ՏԵՇԻԼ Վ.

**ՈՎՍԱՆՆԱ և ՆԱՐԴԻԶ, յետոյ ՆՈՒՆՈՒՖԱՐ**

**ՈՎՍ.** (Վերաղառնում է արագ քայլերով բեմի կենտ-  
րոնը. Վրդովուած է մօք դէմ): Մամա, պէտք է ասած,  
որ շատ սիրալիք ընդունեցիր իմ հիւրերին, շատ: Դու  
նրանց ուղղակի վոնդեցիր մեր անկց:

**ՆԱՐԴ.** Շատ լաւ արի: Թող գնան իրանց եղբօրը  
պատմեն, որ միւս անգամ չընամարձակուի իւր գլխից  
մեծ բաներ բռնել: Անպատկառ, չի ամաչում մի րոպէ  
մտածել, որ կարող է Ֆուանգուլեանների փեսան լինել:

**ՈՎՍ.** Բայց քոյրերն ինչ մեղ ունեն, որ իրանց եղ-  
բայրն ինձ առաջարկութիւն է արել:

**ՆԱՐԴ.** Այդ գիւղականները շատ երախտամոռ են  
առհասարակ: Աղքատ ու հպարտ. ես նրանց ուզում եմ  
բարութիւն անել, նրանք վիրաւորում են ինձ ու քեզ:

**ՈՎՍ.** Նախ դու սկսեցիր, մայրիկ. քո ամեն մի խօս-  
քը ուղղակի վիրաւորանք էր նրանց համար:

**ՆԱՐԴ.** Թող լինի: Այդպիսիներին, որ մի քիչ երես  
տանք, զգներովս կը փաթուին: Ամեն մարդ պիտի իւր  
տեղը լաւ ճանաչի: Տես, կանֆեկտ են բերել քեզ համար:  
Ով գիտէ որ բաղկալից են առել... Վերցրու, դէս գցիր,  
որ հիւրերս չըտեսնեն այդ կեղտոտ տուփը...

**ՈՎՍ.** (Վերցնում է քաղցրաւենիքի տուփը): Ոչթէ դէս կը  
գցեմ, այլ կը դնեմ: ամենալաւ տեղ, որ քո աղգականները  
տեսնեն: (Ծուփը զնում է դաշնամուրի վրայ): Ամեն մի  
նուէր յարգանքի է արժանի: Մեծ քրոջ մասին ասա,  
ինչ որ ուզում ես, բայց Լէյլին շատ համակրելի աղջիկ  
է: Ես խնդրեցի նրան, որ շուտ-շուտ գայ մեր տուն,  
Արժէ նրա հետ բարեկամանալ:

**ՆՈՒԽՈՒԹԱՐ.** (Գալիս է խորքի ղոներից), Խանում,  
Լևոն աղան զարթնեց: (Սպասում է հրամանների):

**ՆԱՐԴ.** Ահ, վերջապէս: Գնամ, տեսնեմ գիշերն ինչ-  
պէս է անցկացրել: (Ուզում է գնալ խորքի ղոներով):

**ՈՎՍ.** Մայրիկ, սպասիր մի բոպէ: (Մօտենում է,  
լիսածայն): Ես քեզ խորհուրդ եմ տալիս Լեռնին շատ  
էլ չը ձանձրացնել մայրական խնամքով:

**ՆԱՐԴ.** Ինչու:

**ՈՎՍ.** Որովհետեւ նա հիւանդ է:

**ՆԱՐԴ.** Գիտեմ: Ուրեմն, ես իմ հիւանդ որդուն պի-  
տի առանց խնամքի թողնեմ:

**ՈՎՍ.** Հէսց այդ է, որ չըգիտես այդ ինչ հիւանդու-  
թիւն է: Քո ծայրայեղ հոգատարութիւնը, քո ախ ու  
վախն ու հառաչանքները աւելի բորբոքում են նրաւ վէր-  
քերը, քան թեթևացնում: (Հեռանում է մօրից):

**ՆԱՐԴ.** Զեմ հասկանում: (Գնում է խորքի ղոներով):

**ՈՎՍ.** Մի օր կը հասկանաս, բայց ուշ կը լինի: (Պատ-  
րաստում է դաշնամուր նուազելու եւ սկսում է):

### ՆԱԽԱՍԵՆԵԱԿՈՒՄ ԶԱՆԳԱԿ

**ՆՈՒԽ.** (Գնում է աջ կողմի ծրկորդ ղոներով նախա-  
սենեակի ղոները բանալու:

### ՏԵՇԻԼ VI.

#### ՈՎՍԱՆՆԱ և ԺՈՐԺ:

**ՈՎՍ.** (Նուագում է մի թեթեւ բան կէս բոպէի շափի):

**ԺՈՐԺ.** (Գալիս է աջ կողմի երկրորդ ղոներից: Գե-  
ղեցիկ դէմքով, նորածեւ հազնուած երիտասարդ է, ծեւերը  
յաւակնական կիրթ: Երեսը սափրած է, ցածի շորթի վո-  
րայ թողած է մի մատնաշափ մօրուա, բեղերը խնամքով  
սանրած են: Հանդարտ քայլերով մօտենում է Ովսաննա-  
յին եւ ճեռը մեղմիկ ղնում է նրա ուսի վրայ), Բարեւ,  
շնորհաւորում եմ:

**ՈՎՍ.** (Ուզախ ցնցութելով, խաղն ընդհատում է եւ ոտ-  
քի ելնում): Դու ես:

**ԺՕՐԺ:** Զէիք սպասում այդպէս վաղ: (Սեղմում է Ռվասաննայի ծեռը՝ ամուր): **Մաղիկների** փունջը բերեցին: **ՈՎԾ.** Ոչինչ չեմ ստացել:

**ԺՕՐԺ.** (Ձեռնոցները հանդարտ հանելով): **Անպիտան-** **ներ,** միշտ այդպէս անճիշտ են: Բայց ես քեզ համար աւելի թանգարին նոռէր եմ բերել: (Ձեռնոցները զցում է ամուր զլխարկի մէջ, զլխարկը դնում է մէջտեղի սեղա-  
նի վրայ):

**ՈՎԾ.** Երկի մի ուրախալի լուր: (Անհամբեր): **Հա-** **պա,** հապա: Նստիր:

**ԺՕՐԺ.** (Հառաշելով): **Այն** բարդ խնդիրը, որ ինձ արգելում էր մեր ամուսնութեան օրը նշանակելու, վեր-  
ջապէս լուծուեց: (Հանդարտ նստում է):

**ՈՎԾ.** Յուսով եմ բարեյաջող: (Նստում է ժօրժի մօտ):

**ԺՕՐԺ.** Այո, Գոնէ այնքան, որ ես այժմ կարող եմ քեզ համարել իմը: (Բոնում է Ռվասաննայի երկու ծեռ-  
ները): **Ուրմի** ես, աաա:

**ՈՎԾ.** (Ուրախութիւնից շփոթուած): **Այո,** ի, հարկէ: Եւ աւելի քեզ, քան թէ ինձ համար: Դու շատ էիր մտա-  
ծում, շատ էիր ճնշուած:

**ԺՕՐԺ.** (Տակալին Ռվասաննայի ծեռները բռնած): **Ախ,** Ռվասաննա, եթէ իմանայիր, թէ ինչ բարոյական տան-  
ջանքներ եմ քաշել, շատ կըցաւէիր իմ մասին: (Ձեռնե-  
րը բաց թողնելով): Բայց ոչինչ, կաշմարն անցաւ, այժմ  
պէտք է աշխատել ամեն ինչ մոռանալու:

**ՈՎԾ.** Կաշմարն անցաւ: Կընշանակի, այժմ կարող ես պատմել, թէ այդ ինչ խնդիր էր, որ ինձանից թագ-  
ցնում էիր:

**ԺՕՐԺ.** Օօ, ի հարկէ, կըպատմեմ: Բայց ոչ այսօր կամ վաղը, ոչ-շուտով: Միայն այն ժամանակ, երբ մենք կըլինենք ամուսիններ: Իսկ առ այժմ գնա, յայտնիր ծնողներիդ, որ ես քո նշանածն եմ: Միայն ոչ իմ ներ-  
կայութեամբ, ոչ ոչ, ես չեմ սիրում այդպիսի տեսա-  
րաններ, յետոյ...

**ՈՎՍ.** Մի փոքր առաջ մայրս նախատում էր ինձ, որ ես ոչ հարսնացու եմ, ոչ ազատ...

**ԺՕՐԺ.** Գիտեմ, սիրելիս, գիտեմ: Բայց ինչ արած, հանգամանքները շատ բարդ էին: Են, վերջապէս, մի օր բոլորը կիմանաս եւ, յուսով եմ, կըներես...

**ՈՎՍ.** (Զարմանալով): Կըներեմ... Բնչը...

**ԺՕՐԺ.** (Վեր է կենում շփոթովմիւնը թագնելու համար): Լաւ, թողնենք, քո հարցասիրութիւնն ինձ համար ախորժելի չե...

**ՈՎՍ.** (Վեր է կենում): Շատ լաւ, չեմ ձանձրացնիլ: Ուրեմն յայտնեմ մօրս:

**ԺՕՐԺ.** Անպատճառ: Բայց գիտեմ: Երեխ ծնողներդ կըկամենան հանդիսաւոր նշանադրութիւն սարքել: Այդ բանն ես չեմ ուզենալ: Ի՞նչ հարկաւոր է այդ չինական ձեականութիւնը: Ամ, Բնչ կասես:

**ՈՎՍ.** Ես համաձայն եմ: Ես էլ չեմ սիրում այդ աւելորդ բաները: Ինձ համար կարևորն ուրիշ բան է: (Նայում է ժօրժին սիրալիթ):

**ԺՕՐԺ.** Գիտեմ: Մեր փոխադարձ սէրն ու յարգանքը, այնպէս չե:

**ՈՎՍ.** (Դլխով համաձայնովթեան նշան է անում, սիրալիթ ժպտալով):

**ԺՕՐԺ.** Բայց այսուամենայնիւ, ահա քեզ մի փոքրիկ գրաւական ծնողներիդ հանգստացնելու համար: (Հանում է ծագ մատից մի մատանի եւ հագնում է Ովսաննայի մատին): Թանգ բան-չէ, բայց մօրս նուէրն է, ուրեմն անգին: Ինչու հառաչեցիր, կարծես, դու ուրախ չես:

**ՈՎՍ.** (Թոյլ է տուել ժօրժին մատանին հագնելու, հառաչել է): Ոչինչ, մի վատ նախազգացում... տարօրինակ է թւում: Զը նայելով, որ վաղուց երազում էի այս օրուայ մասին, բայց մի տեսակ երկիւղ պաշարեց՝ ինձ: Այս մատանին այնպէս հեշտ դուրս եկաւ քո մատից: Ոչինչ, ոչինչ, ասում են ուրախութիւնը տարօրինակ

զգացումներ է զարթեցնում մարդու սրտում։ Նայիր։ (Համ-  
բուրում է մատանին)։

**ԺՕՐԺ.** Երախայ։ (Ժպտում է, յետոյ լուրջ) Բայց թող-  
նենք մեր զգացումները մօտիկ ապագայի համար։ Լսիր,  
Ովսաննա, (Բոնում է Ովսաննայի ծեռը)։ Ես սկսել եմ ան-  
կեղծութեամբ, ուզում եմ մինչև վերջը լինել անկեղծ։ Մի  
մոռանար, որ ես ոչինչ չունիմ, գիտես, ոչինչ, բացի իմ  
գիտութիւնից և արհեստից։

**ՈՎՍ.** (Ձեռը լոլում է Ժօրժից անուշ վշտացած) Մի-  
այն այդքանը, ուրիշ ոչինչ (Նայում է աշքերի մէջ խորը  
հայեացքով)։

**ԺՕՐԺ.** Եւ սիրուց դէպի քեզ։ Այս էիր ուզում։ (Ու-  
զում է նորից ծեռը բռնել)։

**ՈՎՍ.** (Ձեռը դարձեալ խլում է) Զարմանալի է, որ  
այդ բանը միշտ պէտք է քեզ յիշեցնել։

**ԺՕՐԺ.** Ովսաննա, մենք դեռահասներ չենք, սէրը  
խօսքերով չի ապացուցւում։

**ՈՎՍ.** Լաւ լաւ, ես ոչինչ չեմ պահանջում քեզանից։  
Ի՞նչ էիր ուզում ասել։ Որ աղքատ ես։ Այդ ես վաղուց գի-  
տեմ։ Ծնողներս էլ զիտեն։ Բայց չէ որ ես հարուստ եմ  
և ինչ որ ունիմ քեզ է պատկանելու։

**ԺՕՐԺ.** (Ծինծու հպարտութեամբ) Օհ, ոչ, ես այդ չեմ  
կամենում։ Թո օժիտը քեզէ միայն պատկանելու։ Ես միայն  
ժամանակաւոր պիտի օգտուիմ նրանից, շատ շատ մի  
տարի, մինչև որ...

**ՈՎՍ.** (Ձեռով փակում է Ժօրժի քննանը) Սուս, բա-  
ւական է, այդ մասին այլևս ոչ մի խօսք, ես արգելում  
եմ...

**ԺՕՐԺ.** (Ովսաննայի ծեռը սեղմում է իւր շրթունք-  
ներին)։ Հպատակւում եմ... Դէհ, թոյլ տուր ինձ հեռանա-  
լու, ապա թէ ոչ կարող են հիւրեր գալ և կըսկսուին  
շնորհաւորութիւններ, օրհնանք և այլն և այլն։

**ՈՎՍ.** Ճաղին, ի հարկէ, կը գաս։

**ԺՕՐԺ.** Կ'աշխատեմ։ Բայց ոչ, ես կը գամ իրիկնա-

գէմին, երբ հիւրերը ցըռուած կը լինին:

**ՈՎԾ.** Դու գիտես:

**ԺՕՐԺ.** Ուրեմն, ցըտեսութիւն: (Դրկում է Ովսաննային): Կարելի՞ է:

**ՈՎԾ.** Այժմ, այս:

**ԺՕՐԺ.** (Արագ համբուրում է Ովսաննային մի անգամ):

**ՈՎԾ.** (Զգացուած եւ սաստիկ շփոթուած, մեղմ նրում է ժօրժին): Բաւական է:

**ԺՕՐԺ.** (Գլխարկը սեղանի վրայից վերցնելով): Ուրեմն, երիկնադէմին: Ձը տեսութիւն: Դու կը տեսնես, թէ ինչպէս կերջանկացնեմ քեզ, թ՛ը: (Դնում է աջ կողմի երկրորդ դռններով):

**ՈՎԾ.** (Նայում է ժօրժի ետեկից սիրայիր հայեացքի, երջանիկ ժպուամ: Յանկարծ տիրում է, մշածուամ): Զարմանալի է: (Ձեռք սեղմում է սրտին: Նայում է մատանուն, համբուրում է յանկարծակի եւ ուրախ վազուա խորքի դռններով):

## ՏԵՍԻԼ VIL.

### ՄԹԱՆԷՍ և ԱՐԱՄԱԶԴԻ

**ԱԹԱՆԷՍ.** (Քալիս է աջ կողմի երկրորդ դռններից: Միջահասակ, կարծ խուզած ալեխառող մազերով, թանձր կեռ ունքերով, ծերմակ, կարծ, հաստ քեղերով, սափրած երեսով՝ մարդ է: Հայեացքը խիստ է, քայլուածքը ծանր, հպարտ, ծայնը խրոխտ: Հագած է լայն սիրտուով, լայն վարդիկ, օսլած շապիկ ծալած օծիքով: Արամազդին): Գնում ես էլիր: (Հնգնական տօնով, որի մէջ լսուած է եւ բարկութիւն): Էտու, լաւ, գնա, ով է քեզ զօրով պահում: Բայց ասա, տեսնեմ. շնորհակալ ես հեռանում ինձանից, թէ անշնորհակալ:

**ԱՐԱՄԱԶԴԻ.** (Առողջ եւ ամուր կազմուածքով տղամարդ է, խելօք, առնական, համարծակ դէմքով: Սեւ բարակ բներ, կարծ խուզած միրուքով, ամուր սեղմուած շրթունք-

ներ։ Հազնուած է շատ պարզ, Բայց մաքուր։ Թեմերն ազատ են եւ զերծ հածոյանալու ծգտութից։ Անշնորհակալ լինելու իրաւունք չունիմ։ Ես ձեզանից վատութիւն չեմ տեսել։

**ԱԹԱՆԵՍ.** (Նստելով զահատրակի վրայ ծանը ու բարակ, հանումէ գրպանից «տէրողորմեան»), ցոյց տալով Արամագղին, դիմացի բազկաթոռը։ Ասա, տեսնենք, ում մօտ ես մտել։

**ԱՐ.** (Նստումէ գղակը ճեռքին)։ Ոչ ոքի։

**ԱԹ.** (Ունքերը զեր բարձրացնելով)։ Զես ծառայելու, հէ։

**ԱՐ.** Ոչ։

**ԱԹ.** Հապա։ Յոյսդ ինչի՞ վրայ ես դրել։

**ԱՐ.** Իմ աշխատասիրութեան և եռանդի։

**ԱԹ.** Դրանցով փոր չի կշանալ։ Փող—բան։

**ԱՐ.** Ես, մի քիչ ունիմ։

**ԱԹ.** Լաւ, լաւ։ Դէ որ ունիս, կարող ես մի լաւ խանութ բաց անել։ Կօշիկների խանութ բաց արա, կօշիկների։

**ԱՐ.** Արդիւնաբերական-գործարանական քաղաքում միայն ծոյլերն ու անդամալոյներն են խանութում նստում։

**ԱԹ.** Հապա ի՞նչ ես ուզում անել։

**ԱՐ.** Ես մի ընկերութիւն եմ կազմել։

**ԱԹ.** (Զարմացած)։ Ի՞նչ, ընկերութիւն։

**ԱՐ.** Այս։

**ԱԹ.** Անհւնը։

**ԱՐ.** (Դուքս է քերում գրպանից մի թուղթ եւ տալիս է Աթանէսին)։ համեցէք, կարդացէք։

**ԱԹ.** Տեսնենք, տեսնենք։ (Թուղթն առնում է, ակնոց է դնում եւ, հեզնական ժակիտ երեսին կարդում է)։ «Торгово-промышленное Товарищество Арамазда Аслановича Агавеляна и другихъ»... (Թուղթը ծգում է սեղանի վրայ ծաղրաբար)։ Օհօ հօ հօ, շատ թունդ ես վազում, տես ոտղ քարին չը դիպչի։

Ա.Բ. (Թուղթը զերցնում է ու դնում գրպանը):  
Ես հաւատում եմ իմ աստղին:

Ա.Թ. Ո՞ր սարի գլխից ես տեսել աստղդ, հէ:

Ա.Բ. Տասնուհինգ տարուայ մէջ աչքիս առջև այս  
քաղաք եկել են փոքրիկ դրամագլխով մի շարք մար-  
դիկ առանց վարկի, առանց ծանօթների և ահագին գոր-  
ծեր ձեռնարկել:

Ա.Թ. (Մի ոտը ծալելով ու տակը դնելով): Օրինակ,  
ովքե՞ր:

Ա.Բ. Զիբերաը, Առնշտէյնը, Պետերսօնը, Միւլմանը,  
որ մէկն ասեմ:

Ա.Թ. Նրանք կամ հրէաներ են կամ եւրոպացիներ:

Ա.Բ. Ես մի գրքում կարդացել եմ, որ հայերը  
շատ հին ժամանակ մրցել են աշխարհի ամենաճարպիկ  
վաճառականների—փիւնիկեցիների հետ: Եթէ մեր նա-  
խահայրերը այնպէս համարձակ են եղել, ինչու մենք չենք  
կարող լինել:

Ա.Թ. (Հեգնաբար): Ի հարկէ, ի հարկէ, հէ հէ...

Ա.Բ. Ի՞նչ արած, իննը տարի շարունակ ես աշ-  
խատեցի ձեզ համոզել, որ ձեր գործելու եղանակը  
հնացել է, պէտք է փոխել, դուք արհամարհեցիք իմ ա-  
սածները: Դուք չը լսեցիք իմ խորհուրդները:

Ա.Թ. (Գրգորած, ոտը հանումէ տակից): Աղա,  
շինականի տղայ, դու ով ես, որ ես քո խորհուրդները  
լսէի հէ: Վաճառականութիւնն ես մօրս կաթի հետ եմ  
ծծել: Իմ հայրն էլ է եղել վաճառական, պապն էլ, մեծ  
պապն էլ: Տեսնում ես այդ խալիները: Որը Խորասանից  
է բերուած, որը Թուրքեստանից, որը Բելուջիստանից:  
Եօթանասուն ու հինգ տարի մենք Մոսկուայից սկսած  
մինչև Թէհրան, Սամարդանդից սկսած մինչև Մանչեստր  
առուտուր ենք ունեցել, հիմայ դու պիտի խելք սովո-  
րեցնես Ֆրանգուլեաններին:

Ա.Բ. Պարոն Աթանէս, անցան այդ ժամանակ-  
ները. հիմա մրցումը դժուարացել է, վաճառականից

այժմ շատ բաներ են պահանջւում: Վերջապէս, այլ է վաճառականութիւն, այլ է արդիւնաբերութիւն:

**ԱԹ.** (Ոտքի է կանգնում վրդովուած): Շատ ես խելքեր զոռ տալիս... Լակնտ:

**ԱՐ.** Ոտքի է կանգնել Աթանհսի հետ միաժամանակ: Ցնցում է «Հակոտ» բառը լսելիս: Բայց զապում է իրան):

Կարծ լուսթիւն:

**ԱՐ.** (Դուքս է բերում գրպանից մի մեծ քառածալ թերթ եւ տալիս, է Աթանհսին): Թոյլ տուէք ներկայացնել ձեզ իմ վերջին հաշիւը:

**ԱԹ.** (Զոշացել է որ վիրատրեց Արամազդին: Վերցնում է թուղթը: Մեղմ): Գործ սկսել ես:

**ԱՐ.** Այս:

**ԱԹ.** Ե՞րբ:

**ԱՐ.** Վեց ամիս է:

**ԱԹ.** Վեց ամիս է և ինձ ոչինչ չես ասել: (Թուղթը շարտում է սեղանի վըայ):

**ԱՐ.** Գաղտնիք պահելը ձեզանից եմ սովորել:

**ԱԹ.** Ի՞նչ գործ է սկսածդ:

**ԱՐ.** Հանքային:

**ԱԹ.** (Զարմացած եւ քարկացած): Ի՞նչ:

**ԱՐ.** Ես գնեցի Հաջի, Ղասումից այն հողերը, որ, յիշում էք, մի ամբողջ ամիս ես յորդորում էի ձեզ և չը գնեցիք:

**ԱԹ.** (Աւելի գրգռուած): Դու համարձակուեցիր իմ պատառը խել իմ ձեռքից: Ես ուզում էի, որ թուրքը նեղն ընկնի և հողը կէս գնով տայ:

**ԱՐ.** Ոչ, պարոն Աթանէս, միայն այդ չէր պատճառը, որ հողը ձեր ձեռքից դուրս եկաւ:

**ԱԹ.** Բաս ի՞նչ էր էլի:

**ԱՐ.** Թուրքը փողը նազդ էր ուզում:

**ԱԹ.** Նազդ կը տայի:

**ԱՐ.** (Նայում է Աթանհսին եւ տիուր ժպտում):

Դժբաղդաբար չէիք կարող տալ:

Ա.Թ. (Կատաղնով): Ավ ասաց չէի կարող տալ:

Ա.Բ. Ով աւելի լաւ գիտէ ձեր գործերը, քան  
ես:

Ա.Թ. (Զայնը թարժրացնելով): Սպաս... (Շփոթուել է,  
յուզունլ, մտածումէ). (Հռութիւն):

Ա.Բ. (Նայում է Աթանհիսին կարեկցութեամբ):

Ա.Թ. (Մի զժուական շարժումն անելով, մօտենում  
է Արամազդին, աջ ու ձախ նայելով, բռնում է Նրա  
ծեռը, կիսածայն). Լսիր, եթէ բերանիցդ մի բառ բաց  
թողնես մերոնց մօտ, մանաւանդ դրսում, ես քեզ կօշկիս  
ծայրով ծովը կըշպրտեմ: (Բաց է թողնում Արամազդի  
ծեռն ու հեռանում):

Ա.Բ. (Արժանաւորութեամբ եւ համարժակ): Պարոն  
Ֆռանգուլեան, առաջինը այժմ դուք ոչինչ չէք կա-  
րող անել ինձ, երկրորդը, թոյլ տուէք վերջին խոր-  
հուրդը տալ ձեզ. հէնց այժմ իսկ յայտնեցէք ձեր ընտա-  
նիքին ձեր գործերի դրութիւնը, որպէս զի նրանք իրանց  
շռայլ ծախսերը կըճատեն:

Ա.Թ. (Կատաղած, թուղթը վերցնում է սեղանի վրա-  
յից). Գնանք իմ սենեակը հաշիւդ տեսնեմ. ես չը  
կարողացայ քո լեզուն կըճատել: (Գնումէ ղէպի աջ կող-  
մի առաջին ղոները):

Ա.Բ. (Հետեւումէ նրան).

Ա.Թ. (Մի պահ կանգ է առնում ղոների մօտ). Ես  
միայն փողի պակասութիւն ունիմ, կըիզիս է, ուրիշ  
ոչինչ. Լսում ես: Բայց, ինչքան էլ վատ լինին Աթանէս  
Ֆռանգուլեանի գործերը, նա ոչ մի մարդու ձեռք չի  
մեկնիլ: Լսում ես, ոչ մի մարդու: (Գնումէ աջ կողմի  
առաջին ղոներից):

Ա.Բ. Տայ Աստուած: (Հետեւում է Աթանհիսին):

## ՏԵՍԻԼ VIII.

ՈՎՍԱՆՆԱ, ՍԱՄՈՒԷԼ, ՆԱՐԳԻԶ, մի վայրկեան ԱՐԱՄԱԶԴԻ, յետոյ  
ՆՈՒՆՈՒԹԱՐ ու ԼԵՒՈՆ.

**ՍԱՄՈՒԷԼ.** (Դալիս է խորքի ղոներից, Ովսաննայի  
ծեռը բռնած, ուժով ներս քնրելով։ Միա ծեռում  
ըռնած է ջութակը կնտնտոցի հետ։ Քրոջ պէս դժգոյն,  
նըրակազմ, համակրելի ղէմքով երիտասարդ, ծաշակով  
հազնուած)։ Ովսաննա, Ովսաննա, եթէ քո Ժօրժին սի-  
րում ես, հինգ րոպէ, միայն հինգ րոպէ, փոխարէնը  
հարսանիքիդ երեկոյ մինչև լոյս կը նուագեմ։

**ՈՎՍԱՆՆԱ.** Օհ, քեզանից ազատուել չի կարելի,  
(Նստում է դաշնամուրի մօտ)։

**ՆԱՐԳԻԶ.** (Եկել է Սամուէլի ու Ովսաննայի ետելից)։  
Մի ուրախ բան ածեցէք, որ սիրտս բացուի։ Այսօր եր-  
կու տօն ունինք, համ ծնունդ համ նշանդըութիւն։ Օհ,  
վերջապէս (Նստում է ու պատրաստում ականջ ղնելու)։

**ՍԱՄՈՒԷԼ.** Ի՞նչ անեմ, առանց ակօմպանիմէնտի  
չեմ կարողանում ըմբռնել։ Ահա. (Դնում է պիւթիրի  
վրայ մի նօտատետը եւ պատրաստում ջութակ նուագել)։

**ՈՎՍԱՆՆԱ.** (Ծկում է դաշնամուր նուագել)։ Այս ինձ  
ծանօթ մի եղանակ է։

**ՍԱՄՈՒԷԼ.** (Ջութակը նուագելով)։ Հրաշալի բան է։  
Սարազատի ամենասիրելի նօրտիւրնը։ Այդպէս, այդպէս,  
միայն մի փոքր հանդարտ։ Հիանալի է։

(Նուագում են երեք քառորդ ըոպէ)։

(Նախասենեակում զանգակ)։

**ՆՈՒՆՈՒԹԱՐ.** (Դալիս է խորքի ղոներից, զնում է աշ  
կողմի երկրորդ ղոներով նուագելու միջոցին եւ իսկոյն յետ  
է զալիս մի մեծ փունջ ծաղիկներ քերելով։ Մօտենում է  
նարգիզին եւ տալիս է մի այցեսում)։

**ՆԱՐԳԻԶ.** Ովսաննա, տես Ժօրժն ինչ լաւ ծաղիկներ  
է ուղարկել քեզ համար։

**ՈՎՍՍՆՆԱ.** (Խաղը չի ընդհատում): Դիր դաշնամուրի վրայ եւ գնում է խորքի դրներով):

**ՆՈՒՆՈՒԹԱՐ.** Փունջը դնում է դաշնամուրի վրայ եւ գնում է խորքի դրներով):

**ԱՐԱՄԱՉԴԻ.** Գալիս է աջ կողմի առաջին դրներով մի զրիշ ծեռում, պիտի պարագ): Ներեցէք, օրիորդ, հայրիկը խընդրում է այստեղ չընուագել: (Գնում է նոյն դրներով յետ):

**ՈՎՍՍՆՆԱ.** (Սամուէլին): Տեսար: (Մի քանի ակկորդներ եա տալով, խաղն ընդհատում է, վեր է կենում, վերցնում փունջն եւ հրճուանքով նայում, հոտ անում):

**ՍԱՄՈՒԻԷԼ.** Դադարում է նուագել, գրգռուած): Այդ անտանելի է, ուղղակի պատիժ: Այս տանը ոչինչ չի կառելի սովորել:

**ՆԱՐԳԻԶ.** Մի նեղանար, որդի, հայր է, պէտք է յարգել: (Վեր է կենում):

**ՍԱՄՈՒԻԷԼ.** Ահ, յարգել, յարգել, իսկ իմ հոգու պահանջները չը պիտի յարգել: Հասկացիք, մայր, ես երաժշտութիւնը պաշտում եմ:

**ՈՎՍՍՆՆԱ.** Լաւ, մի վրդովուիր, ճաշից յետոյ կը կրկնենք:

**ՍԱՄՈՒԻԷԼ.** Ոչ, ես ասել եմ և ասածս պիտի կատարեմ: Միւնայնն է, այս քաղաքում ոչինչ չի կարելի սովորել: Իմ փրկութիւնը կամ մայրաքաղաքն է կամ արտասահմանը: Այս մթնոլորտում ես խեղդւում եմ:

**ԼԵՒՈՆ.** Իսկ ես արդէն խեղդուել եմ: (Գալիս է խորքի դրներից: Հիւանդատ, թուլակազմ նրիտասարդ է, նօսր մազերով, նօսր ոնքերով թերթերունքները թափուած: Հագած է շատ լաւ կարուած մոխրագյն հագուատ: Ձեռները ծածկուած են բարակ սեւ ծեռնոցներով, որոնց եղբէք չի հանում: Թոյլ թոյլ նստում է բազկաթոռներից մէկի վրայ):

**ՆԱՐԳ.** (Նայել է Լեւոնին կարեւցութեամք եւ տխուր դէմքով այն վայրկեանից, երբ նա երեւացել է): Այսօր գոյնդ' լաւ է:

**ԼԵՒՈՆ.** (Ներվային): Լաւ, մի կրկնիր միւնայն երգը

ամեն օր։ Զանձրալի էք ամենքդ։ Ի՞նչ ես հառաջում ու  
թթուած դէմքով նայում ինձ։ Մւֆ, երբ պէտք է ազա-  
տուհմ այդ հսկողութիւնից։ (Դառնուաէ Սամուէլին)։ Իսկ  
քո ջութակը, օօ, ի՞նչ ուրախութեամբ ես այն կը փշէի  
և վառարան կը գցէի։ Առաւօտից սկսած մինչեւ կէս գի-  
շեր ներվերս սղոցում ես։ Մարդ կարող է ուղղակի խե-  
լագարուել այս տանը։

**ՍԱՄ.** Տեսնում ես, մայրիկ, ամեն կողմից բողոք և  
արգելք։ Թոյլ տուր ինձ գնալ, թոյլ տուր։

**ՆԱՐԴ.** Լաւ, այսօր ժամանակը չէ այդ մասին խօ  
սելու, մի թունաւորից մեր ուրախ օրը։

**ՍԱՄ.** Ահ, բռնականներ։ (Արագ քայլերով գնում է  
խորքի դոներից, ջութակը տանելով)։

### ՏԵՍԻԼ IX.

Նոյնք, առանց ՍԱՄՈՒԵԼԻ

**ԼԵՒՈՆ.** Թողէք գնայ, ի՞նչ էք արգելում։

**ՆԱՐԴ.** Մէկին թողեցի շատ բաղդաւորուեցի, որ միւ-  
սին էլ թողնեմ։ (Հառաջում է)։

**ԼԵՒՈՆ.** (Գրգոռուելով)։ Ի՞նչ ես ուզում ասել դրանով,  
պա, ինչ։ Պատասխանիր, մի հառաջիր ու գլուխու շար-  
ժիր խորհրդաւոր։

**ՆԱՐԴ.** Լաւ, ես մեղայ Աստծու, որդի, կը լոեմ,  
միայն դու մի՛ չարանար։

**ԼԵՒՈՆ.** Ուզում ես ասել, որ ես քեզ ձանձրացրել  
եմ, այսու Սպասիր, սպասիր, շատն անցել է, քիչն է  
մնում։ Կազատուիս ինձանից, քիչ նախատիր ինձ մըտ-  
քումդ։

**ՆԱՐԴ.** (Ապշած) Ե՞ս եմ քեզ նախատում։ Ովսաննա,  
ինչե՞ր է ասում եղբայրդ։

**ՈՎԾ.** Լեռն, դու անարդար ես։ Մայրիկը ոչ ոքի  
այս տանն այնքան չի սիրում, որքան քեզ։

**ԼԵՒՈՆ.** Հէնց այդ է, որի դէմ ես բողոքում եմ։ Թող

կորչի ծնողական սէրը, չեմ ուզում, չեմ ուզում: (վեր է կենում):

**ՈՎԾ.** (Յանդիմանօրէն): Լևոն...

**ՆԱՐԳ.** (Մեկոախ): Աստուած իմ, ինչեր եմ լսում: Լեհի՛ն. Ովսաննա, դրանք չեն հասկանում, դու պիտի հասկանաս: Լսիր, ինչ-որ այդ մարդիկ անուանում են ծնողական սէր, եսամոլութիւն է: Այո, այո, եսամոլութիւն, այն էլ ամենավատ, ամենաստոր տեսակի: (Սկսում է անցուղարձ անել):

**ՈՎԾ.** (Առանձին, կիսաճայն): Մայրիկ, մի հակառակիր, աւելի կը գրգռուի:

**ԼԵՀԻ՛Ն.** Գազաններն էլ սիրում իրանց ձագերին, բայց միայն ապուշները կարող են ասել, թէ այդ մի բարձր զգացում է: Օհ, ինչ անհուն բերկրութեամբ ես կը փախչէի այդ կնոջ անվերջ խնամքից նրա ծանր հառաջանքները չը լսելու, նրա տխուր աչքերը չը տեսնելու համար: Երեք տարի է նա ողբում է ինձ իւր մըտքում: Երեք տարի է ես քո դէմքի վրայ ժպիտ չեմ տեսնում, մայր: Եւ դու չես զգում, որ այդ ինձ աւելի է տան ջում, քան իմ հիւանդութիւնը: Քո ուրախութիւնը դու պահում ես ուրիշների համար: Թանի-քանի անգամ այս սենեակից այնտեղ, պատի ետևում լսել եմ քո ուրախ ձայնը և ծիծաղը: Բայց հէնց որ ես երեացել եմ, ձայնդ իսկոյն կտրուել է, ծիծաղդ ընդհատուել և դէմքդ մի վայրկեանում պատել է մոայլութեամբ: Եւ գիտես ինչու, Ովսաննա, գիտես...

**ՈՎԾ.** Քեզ սիրելուց, քո մասին ցաւելուց:

**ԼԵՀԻ՛Ն.** (Դառը ծիծաղով): Իմ մասին, հը, հը, ոչ, Ովսաննա, ոչ, չես հասկանում: Ինձ սիրելուց չէ այդ, այլ ինքն իրան սիրելուց: Նա տխում է, որովհեակ իմ ներկայութիւնը նրան ճնշում է, իմ տեսքը նրան ներշընչում է վիշտ: Ես զրկում եմ նրան ուրախութիւնից, ես թունաւորում եմ նրան հանգստութիւնը: Նա ողբում է ոչ ինձ, այլ ինքն իրան: Աա, մայրիկ, այնպէս է, թէ չէ,

ասա, խոստովանիր... ասա էլի, ինչու ես լոռւմ:

ՆԱՐԴ. Ի՞նչ ասեմ, որդի, դու ինքդ էլ չը գիտես խօսածդ: Ցաւը քեզ չարացըել է:

ԼԵՒՈՆ. (Ոտը զարկելով յատակին): Մի խօսիր իմ ցաւի մասին, մի խօսիր: Հիւանդութիւնը քայքայում է միայն մարմինս, իսկ միտքս նրբացնում է: Ահ, չեմ հասկանում որ դահիճն է ծնողական սէր անուանել եսամուլտիւնը և որ դաժան օրէնքն է սրբագործել այդ բըռնութիւնը:

ՆԱՐԴ. Աստծու և մարդկանց օրէնքները:

ԼԵՒՈՆ. Հեռու աարէք ինձնից ձեր Աստծուն: Ո՞վ է նա, ես նրան մինչև օրս չը կարողացայ ճանաչել:

ՆԱՐԴ. (Սարսափիած): Որդի...

ԼԵՒՈՆ. Այո, այո, չեմ ճանաչում: Նա ինձ համար օտար է, բոլորսպին օտար... Ես ատում եմ նրան...

ՈՎԾ. Լեռն:

ՆԱՐԴ. Ես չեմ կարող իմ հարազատ որդուց լսել այդպիսի բաներ: Դա սրբապղծութիւն է, օօ, սրբապղծութիւն: (Ականջները քաշելով, Գնում է խորքի դռներով):

## ՏԵՇԻԼ X.

ԼԵՒՈՆ ԵՒ ՈՎԾԱՆՆԱ:

Մի բանի վայրկեան լոռութիւն:

ԼԵՒՈՆ. (Ընկճուած, գունատ, մօտեցել է դաշնամուրին, արմունկները դրել է նրա վրայ եւ երեսը ծեռներով ծածկել):

ՈՎԾ. (Կամացուկ մօտենում է Լեռնին եւ թեւը բըռնում): Լեռն:

ԼԵՒՈՆ. (Գլուխը բարձրացնում է): Ախ, Ովսաննա, գանգիս մէջ ինչ-որ ցաւ եմ զգում:

ՈՎԾ. Ոչինչ, կանցնի, կառողջանաս:

ԼԵՒՈՆ. (Գլուխը յուահանտութեամբ շարժելով): Ոչ, Ովսաննա, չեմ առողջանալ, իմ բանը պրծած է: Խեղճ

մայրիկ, ես վիրաւորեցի նրան:

**ՈՎՍ.** Գնա, հանգստացիք, Հեռն, դու չպիտի յուզուիս:

**Լեհոն.** (Ուշը ժողովելով): Իրաւունք ունիս: Ես չը պիտի թունաւորեմ ձեր կեանքը: Եթէ ֆօրժը դայ, ու-  
դարկիր իմ սենեակը: (Թոյլ քայլերով զնում է խորքի ղջո-  
ներով:)

**ՈՎՍ.** (Տիսուր հայեացքով նայում է Լեհոնի ետեւից):  
Խեղճ եղբայր, նա կմաղք է դարձել:

### ՏԵՍԻԼ XI.

ՈՎՍԱՆՆԱ. ԵՒ ԱՐԱՄԱՉԴ:

**ԱՐԱՄ.** (Գալիս է աջ կողմի առաջին ղոներից, գոլ-  
խարկը ծեռքին): Օրիորդ, թոյլ տուէք ձեզ մնաք բարե  
ասելու:

**ՈՎՍ.** (Մտքերից սթափուելով) Աա, դուք գնում էք:  
**ԱՐԱՄ.** Այո, այսօրուանից ես այլ ևս ձեր կառա-  
վարիչը չեմ:

**ՈՎՍ.** (Անտարբեր): Ինչու էք հօրս մենակ թողնում:  
**ԱՐԱՄ.** Էհ, օրիորդ, ամեն մարդ ձգտում է անկախ  
լինելու, բաւական է որքան ծառայեցի:

**ՈՎՍ.** (Զեռը մեկնում է): Բարի ճանապարհ:

**ԱՐԱՄ.** (Արագ մօտենում է, զուսպ ջերմովթեամք սեղ-  
մում է Ովսաննայի ծեռը եւ իսկոյն քաց թողնում): Ու-  
րեմ... (Ծփոթութիւնից պլարկը ծմշտում է ծեռների մէջ):

**ՈՎՍ.** (Փունջը վերցնելով, նայում է, հոտ առնու):  
Բան ունիք ասելու:

**ԱՐԱՄ.** (Տատանուելով): Ոչ, Զեզանից էի սպասում  
մի խօսք, մի որեւ...:

**ՈՎՍ.** (Անտարբեր): Ցանկանում եմ ձեզ կատարեալ  
աջողութիւն ապագայում:

**ԱՐԱՄ.** Այդքանը միայն:

**ՈՎՍ.** (Փունջը ղնում է ղաշնամուրի վրայ): Բարեւ-  
ցէք ձեր քոյրերին: (Մօտենում է լրաամուտին):

**ԱՐԱՄ.** (Արագ յաղթելով իւր շփոթովթիմնը, համար-

**Ժակ:** Մի խօսք միայն կը կամենայի ասել, օրիորդ։  
**ՈՎՍ.** (Երեսը ղարձնում է դէպինա, սառը): Լսումեմ։

**ԱՐԱՄ.** Ես համարձակուեցի ձեզ առաջարկութիւն  
 անել, մերժեցիք արհամարհանգով։ Ունէիք իրաւունք, ո-  
 րովհետեւ... Ես ով եմ, որ յանդկնեցի... Բայց ցանկանում  
 եմ, որ մի ուրիշի հետ դուք լինիք երջանիկ...

**ՈՎՍ.** (Ցոյց է տալիս Ժօրժի տուած մատանին): Նա-  
 յեցէք... Ես արդէն երջանիկ եմ...

**ԱՐԱՄ.** (Անախորժ ցնցումն): Ահ, ուրեմն, արդէն  
 վճռուած է։

**ՈՎՍ.** Ինչպէս տեսնում էք։ Երթաք բարով։ (Երեսը  
 ղարձեալ Արամազդից ղարձնում է)։

**ԱՐԱՄ.** (Չի գնում, մտածում է)։

Լոռվթիւն։

**ՈՎՍ.** (Յետ է նայում): Ումն էք սպասում։

**ԱՐԱՄ.** Կարելի՞ է ձեզ մի հարց տալ, օրիորդ։

**ՈՎՍ.** (Զանձրացած): Ահ, ինչ յամառ էք դուք։

**ԱՐԱՄ.** Օրիորդ, Ովսաննա, եթէ խնդիրը միայն ինձ  
 վերաբերուէր, այսքան չէի ձանձրացնիլ ձեզ։ Բայց ա-  
 նուանեցէք ինձ, ինչ կամենաք, ես պարտաւոր եմ երախ-  
 տագէտ լինել այս ընտանիքի վերաբերմամբ։ Այդ մա-  
 տանին, որով գուք երջանիկ էք, ձեր ապագայ տան-  
 ջանքների առաջին օղակն է։

**ՈՎՍ.** (Նկատելի վախնցած): Իմ ապագայ տանջանք-  
 ների։ Ի՞նչ էք ուզում ասել այդ խօսքերով։

**ԱՐԱՄ.** Ժօրժ Աղելքէկեանի մօտիկ անցեալում կայ  
 մի փոքրիկ պատմութիւն, որ ձեզ յայտնի չէ։ Զամուս-  
 նանաք նրա հետ, մինչև որ նա չի յայտնիլ ձեզ այդ..  
 գաղտնիքը։ Ես իմ բարոյական պարտքը կատարեցի, այժմ  
 մնացէք բարով։ (Գլուխ է տալիս եւ եռանդուն քայլերով  
 գնում է աջ կողմի երկրորդ ղոներով)։

**ՈՎՍ.** (Ցնցուել է)։ Սպասեցէք։ (Մի քայլ է անուա  
 դէպի աջ կողմի երկրորդ ղոները եւ կանգ առնում)։ Գնաց։  
 (Ճակատը շլուս է)։ Գաղտնիք... Նա զուր խօսողնե-  
 րեց չէ...։